

ՉԵԿՈՒՅՑ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄՓՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում Շիրակի ՄՓՎ գործունեությունն ուղղված է եղել քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործմանը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրների իրականացմանը:

Գործունեության հիմնական ուղղություններն են եղել՝ վարչության, փրկարարական և հրշեջ փրկարարական ջոկատների անձնակազմերի մարտունակության, մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարձրացումը.

- ոլորտին վերաբերվող իրավական ակտերի իմացության ապահովումը.
- ԱԻ կանխման, հետևանքների վերացման և դեպքերի օպերատիվ արձագանքումը.
- արտակարգ իրավիճակներում մարզի բնակչության վարվելակերպի կանոնների իրազեկվածության բարձրացումը.
- կառավարման մարմինների, կազմակերպությունների, օպերատիվ ծառայությունների հետ համագործակցության բարձրացումը:

Մարզում տեղի ունեցած ԱԻ դեպքերի օպերատիվ արձագանքման և հետևանքների մեղմացման աշխատանքների կատարման ժամանակ Շիրակի մարզային փրկարարական վարչության կողմից կազմակերպվել է փոխհամագործակցություն Շիրակի մարզպետարանի, համայնքների, ծառայությունների, շահագրգիռ կազմակերպությունների և մարզում տեղակայված զին.մասերի հետ:

2020 թվականի ընթացքում ՄՓՎ ճԿԿ-ի ստացված զանգերի թիվը կազմել է՝ 82619 զանգ, □նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 76671 զանգ□: 2020 թվականի զանգերի թիվը աճել է 5948 զանգով կամ 7.7□:

2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում գրանցվել է՝

587 արտակարգ դեպք (2019թ.՝ 749), որոնց հետևանքով զոհվել է՝ 24 (2019թ.՝ 25), վիրավորվել՝ 378 մարդ (2019թ.՝ 499):

Այսպիսով, 2020 թվականի ընթացքում մարզում 2019թ. համեմատությամբ գրանցված արտակարգ դեպքերի թիվը նվազել է 162-ով, (21,6%-ով), զոհերի թիվը նվազել է 1-ով (4% ով), իսկ վիրավորների թիվը նվազել է 121-ով (24,2%-ով):

Գրանցված դեպքերից՝

444-ը՝ տեխնածին են, (2019թ.՝ 594 դեպք), որոնց հետևանքով զոհվել է 16 մարդ, (2019թ.՝ 20 մարդ), վիրավորվել՝ 291 մարդ, (2019թ.՝ 310 մարդ): Տեխնածին բնույթի արտակարգ դեպքերը նվազել է 150 դեպքով կամ 25.2% -ով, զոհերը՝ նվազել է 4-ով կամ 20%-ով, վիրավորներինը՝ նվազել է 19-ով կամ 6.1% -ով:

Գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից 227-ը հրդեհի դեպքերն են (2019թ.՝ 373), հրդեհների թիվը մարզում նվազել է 146-ով, կամ (39.1%-ով): Հրդեհների հետևանքով զոհերի թիվ 2 , (2019թ.՝ 0), վիրավորվել՝ 3 մարդ (2019թ.՝ 9): Հրդեհների հետևանքով զոհերի թիվը աճել է 2-ով կամ 200%, վիրավորներին նվազել է՝ 6-ով կամ (66.6%-ով):

Հրդեհների զգալի մասը արձանագրվել է խոտածածկ տարածքներում՝ 72 և կազմել է ընդհանուր դեպքերի 32□-ը, իսկ բնակելի հատվածում՝ 63 դեպք և կազմել է 28□:

Նվազել է ճՏՊ-ի թիվը – 199 (2019թ.–206) դեպքերի թիվը նվազել է՝ 7-ով կամ 3.3%-ով, զոհերի թիվը՝ 11, (2019թ.–19) նվազել է՝ 8-ով կամ 42.1□, վիրավորներինը՝ 287 (2019թ.–301) նվազել է՝ 14-ով կամ 4.6%-ով:

տեխնածին բնույթի ԱԻ-ից նյութական վնասը կազմել է՝ 72 մլն 480 հազար դրամ (2019թ-ին նույն ժամանակահատվածում 47 մլն 890 հազար 675 դրամ) նյութական վնասը աճել է՝ 24 մլն 589 հազար 325 դրամով կամ 51,3 % - ով:

51-ը՝ տարերային բնույթի են (2019թ.՝ 38 դեպք), զոհեր 1, վիրավորներ չկան (2019թ.–0) աճել է՝ 1-ով կամ 100□ : (Ձնաբուք- 5, կարկտահարություն- 9, ուժեղ քամի- 30, երկրաշարժ- 4, տեղատարափ անձրև, սելավ-1, կայծակահարում-2)

– **կարկտահարությունից** մարզին հասցված նյութական վնասը կազմել է՝ 2 մլրդ 620 մլն 139 հազ 630 դրամ (2019 թ-ին մարզի համայնքներին պատճառված նյութական վնասը կազմել է՝ 4 մլրդ 731 մլն 888 հազ 726 դրամ), տուժել և վնաս են կրել մարզի թվով 8 համայնքների թվով 20

բնակավայրերի 4769,94 հա գյուղ.մշակաբույսեր:Նյութական վնասը նվազել է 2մլրդ 111 մլն 749 հազ 006 դրամով կամ 44,62%-ով:

- ուժեղ քամու հետևանքով մարզին հասցված նյութական վնասը կազմել է` 70մլն 720 հազ. 511 դրամ (2019 թ-ին մարզի համայնքներին պատճառված նյութական վնասը կազմել է` 7 մլն 650 հազ 571 դրամ) տուժել և վնաս են կրել մարզի 21 համայնքների, 49 բնակավայրերի շենք-շինություններ, տանիքներ, գյուղատնտեսական և կենցաղային տեխնիկա, այլ շինարարական նյութեր,ինչպես նաև ազդեցություններ թիրթիղ` 6452,3քմ, ցինկապատ թիթեղ 10771,33քմ,փայտանյութ 118.35խմ, ապակի 299,75քմ): Նյութական վնասը աճել է 63 մլն 069 հազ 940 դրամով:

- Ցրտահարությունից` 2020թ.-ի ընթացքում մարզի տարածքում գյուղմշակաբույսերին հասցված նյութական վնասը կազմել է` 231 մլն 285 հազ 500 դրամ (2019 թ-ին մարզի համայնքներին պատճառված նյութական վնասը կազմել է` 16 մլն 870 հազ 500 դրամ), տուժել և վնաս են կրել մարզի թվով 4 համայնքների 99,58 հա գյուղ.մշակաբույսեր: Նյութական վնասը աճել է 214 մլն 415 հազ 000 դրամով:

- Սելավից` 2020թ.-ին մարզին հասցված նյութական վնասը կազմել է` 46 մլն 392 հազար 950 դրամ, (2019թ-ին մարզը սելավներից վնասներ չի կրել) տուժել և վնաս են կրել մարզի թվով 3 համայնքների թվով 5 բնակավայրերի 31,52 հա գյուղ.մշակաբույսեր:

Տարերային բնույթի ԱԻ- ներից 2020-թ-ի ընթացքում մարզին պատճառված նյութական վնասը կազմել է` 2 մլրդ 968 մլն 538 հազ 591 դրամ:(2019թ-ի նույն ժամանակահատվածում` տարերային բնույթի ԱԻ դեպքերից պատճառված նյութական վնասը կազմել էր 4 մլրդ 756 մլն 409 հազ 797 դրամ), տարերային բնույթի ԱԻ-ներից պատճառված նյութական վնասը նվազել է 1 մլրդ 787 մլն 871 հազ 206 դրամով, կամ 37,6 %-ով:

- **92-ը` սոցիալ-կենցաղային են** (2019թ.` 117 դեպք), զոհեր` 7, (2019թ.` 5), վիրավորվել` 87 մարդ (2019թ.` 189): Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերը նվազել են 25-ով (21.3%):

Սոցիալ-կենցաղային արտակարգ դեպքերից վիրավորների թիվը նվազել է` 102-ով կամ 53.9%-ով, զոհերի թիվը աճել է` 2-ով կամ 40%-ով:

Նշված 92 դեպքերից 28-ը ունակորում դեղորայքից, (2019թ.-28) անփոփոխ: Աճել են թունավորման դեպքերը քիմիական նյութերի` 23 դեպք, (2019թ.-10), բնական գազից` 1 դեպք (2019թ.-0), ալկոհոլից` 14 դեպք (2019թ.-12), նվազել է սննդի թունավորումը` 2 դեպք, (2019թ.-6), այլ աղբյուրներից` 1 դեպք (2019թ.-8),շմուղ գազի թունավորումից` 15 դեպք (2019թ.-33), բրուցեյլոզ` 1 դեպք (2019թ.-7), սիբիրյան խոց` դեպք չի արձանագրվել □2019թ.-1), ջրահեղձում` դեպք չի արձանագրվել □2019թ.-1), դիակի հայտնաբերում` 2 □2019թ-4), Չինամթերքի հայտնաբերում` 3 □2019թ.-4) և անփոփոխ են պայթուցիկ սարքերի տեղադրման ահազանգ` 1 □2019թ.- 1) և օձի(միջատ) խայթոց 1 դեպք □2019թ.-1):

Ընդհանուր առմամբ ԱԻ-ներից պատճառված նյութական վնասը կազմել է` 3 մլրդ. 041մլն.

018 հազ. 591 դրամ (2019թ-ին ԱԻ-ից մարզին հասցված նյութական վնասը կազմել էր` 4 մլրդ 805 մլն 954 հազ 472 դրամ): Նյութական վնասը նվազել է 1 մլրդ 764 մլն 935 հազ 881դրամով, կամ 36.7%-ով:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Վարչությունն իր իրավասության սահմաններում արձագանքել է մարզում արձանագրված ԱԻ դեպքերին`

- հրդեհների արձագանքում հաշվետու ժամանակահատվածում ամենաշատ հրդեհներ արձանագրվել են Գյումրիի ՅՓՁ-ի սպասարկման տարածքում– 106 (2019թ-186), նվազել է 43 %, Արթիկի ՅՓՁ-36 (2019թ- 64) - նվազել է 43.7 %-ով, Ախուրյանի ՅՓՁ- 34 (2019թ-56□, նվազել է 39.3%-ով, Անիի ՅՓՁ-36 (2019թ –64) - նվազել է 43.7%-ով, Աշոցքի ՅՓՁ - 9 (2019թ -16) - նվազել է 43.7%-ով, Ամասիայի ՅՓՁ - 16 (2019թ -12) - աճել է 33.3%-ով.
- կենցաղային կանչերի արձագանքում Գյումրիի ՅՓՁ – 209, Արթիկի ՅՓՁ- 7, Ախուրյանի ՅՓՁ- 19, Անիի ՅՓՁ - 6, Աշոցքի ՅՓՁ- 6, Ամասիայի ՅՓՁ – 4:
- ինչպես նաև ՄՓՎ ստորաբաժանումների կողմից արձագանքվել է հետևյալ այլ բնույթի ահազանգերին` տեղեկատվության փոխանցում – 290, փակ դուռ - 161, ճՏՊ – 48, կանչ առանց հրդեհի- 51, արգելափակված մեքենայի դուրս բերում – 64, հրդեհի կեղծ ահազանգ - 4, սոցիալ կենցաղային կանչ-8, օգնություն քաղաքացուն - 29, սպառնացող վտանգի կանխում - 4, ինքնասպանության փորձ - 6, օձի հայտնաբերման կանչ- 44, օգնություն կենդանիներին - 17, դժբախտ պատահար - 1:

- ՀՀ Շիրակի մարզպետարանում ձևավորված հանձնաժողովի կազմում Շիրակի ՄՓՎ ծառայողները մասնակցել են մարզի համայնքներում արձանագրված տարերային աղետների հետևանքների գնահատման աշխատանքներին:

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏԻՎ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ**

- Հաշվետու ժամանակահատվածում բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անցկացվել են շտաբային, հատուկ տակտիկական ուսումնառարժություններ, օբյեկտային վարժանքներ: Ուսումնառարժությունները ընդգրկել են ինչպես քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտի հիմնարար հարցերը, այնպես էլ մարզի ԲՊ համակարգի օպերատիվ նախապատրաստման խնդիրները:

Մասնակցություն ԱԻ ՓԾ-ի կողմից անցկացված ՀՏՈՒ-ին

- 2020թ. հունիսի 11-ին անցկացվել է «Կարճ հաղորդագրություններով ՀՀ Շիրակի մարզի պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով ՀՏՈՒ:

Շիրակի ՄՓՎ կողմից համայնքների ՏԻՄ ղեկավարության հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել են բնակչության ազդարարման, պատասպարման և տարահանման միջոցառումներ:

(Ի կատարումն ԱԻ Նախարարի մոտ 14.12.2020թ. անցկացված խորհրդակցության N 4 արձանագրության թիվ 6.2 կետով տրված հանձնարարականի)

1. 2020թ. դեկտեմբերի 23-ին՝ Ամասիա միացյալ համայնքի սահմանամերձ Ջրածոր բնակավայրում:
2. 2020թ. դեկտեմբերի 24-ին՝ Բենիամին համայնքում

Մարզի համայնքների կողմից անցկացված ՇՈՒ-ներ

- Հաշվետու ժամանակահատվածում մասնակցություն է ցուցաբերվել մարզի համայնքների կողմից արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացված թվով 3 շտաբային ուսումնառարժություն:

Մարզի ՃՇՇ-ների կողմից անցկացվող հատուկ տակտիկական ուսումնառարժություն

- Ս.թ. փետրվարի 26-ին Անիի ՃՇՇ ՍՊԸ-ի կողմից անցկացվել է «Ձևաբքի հետևանքով փակված ավտոճանապարհի մաքրման աշխատանքների իրականացում» թեմայով ՀՏ ՈՒ:

Մարզում գործող կարևորագույն և վտանգավոր օբյեկտներում հատուկ տակտիկական ուսումնառարժություններ

«Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը» թեմայով ՀՏՈՒ:

- Գյումրու թիվ 48 ՀՓՁ - 24.09 - Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց
- Արթիկի թիվ 49 ՀՓՁ - 11.02 - Արթիկի թիվ 5 հիմնական դպրոց
- Ամասիայի թիվ 50 ՀՓՁ – 26.09 - «Բանդիվան կաթ» ՍՊԸ
- Անիի թիվ 51 ՀՓՁ – 10.03 - Մարալիկ-Անի ՍՊԸ
- Աշոգքի թիվ 52 ՀՓՁ – 24.09 - Ազգանաս Բեռնեցյան» ՍՊԸ

❖ **Կապված կորոնավիրուսային հիվանդության համավարակի հետ՝ մարտ-դեկտեմբեր ամիսներին նախատեսված շտաբային, հատուկ տակտիկական ուսումնառարժությունները, գործնական պարապմունքները և վարժանքները չեն անցկացվել (ԱԻ Նախարարի համապատասխան հրամաններով):**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ**

Համաձայն շտապ գեկույցների հաշվետախտակի ձևերի, ՀՀ ԱԻՆ ՓԾ ԸՊՄԿ (Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման) վարչություն է ներկայացվել՝

- տեղեկություններ մարզի կազմակերպություններում առկա ԸՊ գույքի վերաբերյալ:
- տեղեկություններ ԸՊ գորահավաքային պահուստի գույքի գույքագրման վերաբերյալ:
- ամփոփագիր մարզի ԸՊ կազմավորումների, դրանց անձնակազմի թվաքանակի և հագեցվածության վերաբերյալ:

-տեղեկություններ մարզում առկա ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների վերաբերյալ:

▪ Ճշգրտվել են տեղեկությունները մարզում առկա ինժեներական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, ավտոմոբիլային ճանապարհների և դրանք սպասարկող կազմակերպությունների, էլեկտրահաղորդման ցանցերի և գծերի, գազամատակարարման գծերի և օբյեկտների, առկա ջրամատակարարման համակարգերի ջրատարների, ջրմուղի ցանցերի և կառուցվածքների վերաբերյալ:

▪ Թվով 11 ԸՊ ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվել են հրամանատարական պատրաստության պարապմունքներ:

▪ ԱԻՆ ՓԾ ՇՄՓԿ ԲՊ բաժնի կողմից ցուցաբերվել է մեթոդական օգնություն, ինչպես նաև ճշգրտվել են մարզի թվով 42 համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանները, թվով 147 դպրոցների և թվով 34 բուժ. հիմնարկների քաղաքացիական պաշտպանության պլանները և քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցերը,

▪ ԱԻՆ ՓԾ կողմից համաձայնեցվել և Շիրակի մարզպետի կողմից ԱԻ և ԸՊ ոլորտի 2019 թվականի կատարված աշխատանքների ամփոփման ընթացքում նշված բացթողումների և թերությունների վերացման պլան-ժամանակացույցը:

▪ Շիրակի ՄՓԿ կողմից լրամշակվել ԱԻՆ ՓԾ տնօրենի կողմից հաստատվել է Շիրակի ՄՓԿ խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման ներքին պլանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին 27 սեպտեմբերի 2020 թվականի ՀՀ Կառավարության N 1586-Ն որոշումը և ղեկավարվելով ԱԻ նախարարի և ՓԾ տնօրենի համապատասխան հրամաններով ու հանձնարարականներով Շիրակի ՄՓԿ կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումներն ու աշխատանքները.

ա. Շիրակի ՄՓԿ և ենթակա ստորաբաժանումները բերվել են ռազմական դրության աշխատանքային ռեժիմի,

բ. Շիրակի ՄՓԿ առաջարկությամբ ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հանձնարարվել է մարզի թվով 42 համայնքների, թվով 147 ուսումնական հաստատությունների, թվով 34 բժշկական կազմակերպությունների ղեկավարներին կազմակերպելու բոլոր բնակելի շենքերի և կազմակերպությունների շենքերի մուտքերում ուղեցույցերի ամրացումը՝ ուղեցույցում նշելով բնակչության պատսպարման վայրը և օդային տազնապի ժամանակ բնակչության վարվելակերպի կանոնները,

գ. Շիրակի ՄՓԿ և ենթակա ստորաբաժանումների անձնակազմի կողմից իրականացվել է Շիրակի մարզի թվով 42 համայնքների վարչական տարածքներում առկա թվով 722 բազմաբնակարան շենքերի բնակչության կցագրման վայրերի ուսումնասիրություններ կապված նկուղների պատրաստականության վիճակի և բնակչության իրազեկվածության ուղղությամբ, մասնավորապես ք.Գյումրիում՝ թվով 507 բազմաբնակարան շենքերի նկուղներ, մացած 41 համայնքների բնակավայրերում՝ թվով 215 բազմաբնակարան շենքերի նկուղներ: Բազմաբնակարան շենքերի ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվել է ԱԻՆ ՓԾ և ՀՀ Շիրակի մարզպետին և Շիրակի ՄՓԿ կողմից առաջարկվել և Շիրակի մարզպետի կողմից հանձնարարվել է մարզի համայնքների ղեկավարներին՝ հսկողություն իրականացնել բազմաբնակարան շենքերի (այլ կառույցների) նկուղային հարկերի պատրաստ վիճակում պահպանման, մաքրության ապահովման և նկուղային հարկերում պատսպարվողների համար անհրաժեշտ պարագաների ապահովման ուղղությամբ:

դ. ԱԻՆ ՓԾ տնօրենին է ներկայացվել՝ Շիրակի մարզում առկա անսարք ազդարարման սարքավորումների (շչակների) վերանորոգման, մոնտաժման, սնուցման, ինչպես նաև ազդարարման սարքավորումների վերականգնման վերաբերյալ տեղեկություններ: Շիրակի մարզպետարանի, մարզի համայնքների ղեկավարների և Շիրակի ՄՓԿ համատեղ աշխատանքների արդյունքում վերանորոգվել է թվով 20 էլ.շչակներ և ձեռք են բերվել թվով 10 նոր շչակներ, որոնք Շիրակի ՄՓԿ առաջարկությամբ տեղադրվել են համապատասխան համայնքներում և վայրերում: ՀՀ Շիրակի մարզին ընդհանուր առմամբ անհրաժեշտ է 159 հատ շչակ, առկա է՝ 65 շչակ, որից սարքին 65 հատ, արդյունքում՝ մարզի թվով 42 համայնքների՝ 119

բնակավայրերում ազդարարում հնարավոր է իրականացնել թվով 44 բնակավայրերում, անհրաժեշտ է ևս՝ 94 շջակ:

Ելնելով վերոգրյալից Շիրակի ՄՓՎ կողմից առաջարկվել և Շիրակի մարզպետի կողմից հանձնարարել է համայնքների ղեկավարներին Էլեկտրաշակներ չունեցող բնակավայրերում, հնարավորության սահմաններում, ձեռք բերել և տեղադրել նոր Էլեկտրաշակներ, կամ հնարավորության բացակայության դեպքում որպես այլընտրանքային տարբերակ ձեռք բերել բարձրախոսներ (բյոթ) ազդարարումն իրականացնելու նպատակով:

Ե. Շիրակի ՄՓՎ կողմից իրականացվել է ՀՀ ՊՆ Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման միջոցով տրամադրվող կցագրված անձնակազմի և տեխնիկայի համալրում:

- Համալրված անձնակազմի հետ ըստ նշանակված հաստիքների և մասնագիտությունների տարվել է մեթոդական աշխատանք, տեղեկացվել Շիրակի մարզային փրկարարական վարչության գործառույթներին: Ապահովվել է համալրված անձնակազմի ամենօրյա ներկայությունը Շիրակի մարզային փրկարարական վարչությունում և տրվել հանձնարարականներ ըստ պաշտոնների և մասնագիտությունների:

- Պարբերաբար ԱԻՆ ՓԾ ԾԿԱԿ Է ներկայացվել տեղեկություններ՝ Արցախի Հանրապետությունից Շիրակի մարզ ժամանած ընտանիքների, նրանց կազմի և տեղակայման վերաբերյալ:

- Շիրակի մարզպետի կողմից՝ 12.12.2020թ-ին հաստատված ՀՀ ԱԻՆ Ինժեներական կառավարման պետական ակադեմիա՝ ՊՈԱԿ-ում 2020թ-ի ընթացքում ՀՀ ՇՄ ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանին համապատասխան, Շիրակի մարզի թվով 90 ղեկավար աշխատողներ և մասնագետներ մասնակցել են ՀՀ ԱԻՆ Ինժեներական կառավարման պետական ակադեմիա՝ ՊՈԱԿ-ի կողմից անցկացված առկա և հեռավար դասընթացներին:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման, հետևանքների նվազեցման ուղղությամբ պարբերաբար իրականացվում են հետևյալ միջոցառումները.

- մշտական հսկողություն է սահմանված մարզի քիմիական վտանգավոր օբյեկտներում առկա ուժեղ ներգործող թունավոր նյութերի քանակի և պահպանման նկատմամբ: Մարզում առկա են թվով 2 քիմիական վտանգավոր օբյեկտներ «ԱԼԵԶՍ ԷՆԴ ԶՈԼԴԻՆԳ» ՍՊԸ՝ Գյումրու նախկին «Կեչոր» ՍՊԸ և «Գյումրի գարեջուր» ՍՊԸ-ն, որտեղ պահպանվում և օգտագործվում է ուժեղ ներգործող քիմիական թունավոր նյութ՝ ամոնիակ, քիմիական վտանգավոր նյութերից՝ քլոր է օգտագործում «Վեոլիա ջուր» ՓԲԸ «Արևմուտք» տարածաշրջանի տնօրինության «Շիրակ» տեղամասը, ջրամատակարարման և կոյուղու ցանցի վարակազերծման նպատակով: ՈՒՆԹՆ-ի քանակի վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿԿ,

- Մարզի քիմիական վտանգավոր օբյեկտի անվտանգության վկայագրում ընդգրկված ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների կատարման նկատմամբ և յուրաքանչյուր կիսամյակ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն է ներկայացվում տեղեկություններ կատարված միջոցառումների (ջրային փականների վերանորոգման, ամոնիակային կոմպրեսորի պրոֆիլակտիկ զննման, ճնշման տակ աշխատող փականների ստուգման, կոնդենսատորի խողովակաշարերի կրային նստվածքներից մաքրման աշխատանքների) վերաբերյալ:

- Մարզում 2020թ-ի ընթացքում համաճարակային իրավիճակը բնակչության շրջանում կորոնավիրուսով պայմանավորված հետևյալն է՝ մարզի բնակչության շրջանում թեսթավորվել է թվով 26063 անձ, որից 24709՝ Գյումրի քաղաքում: Կորոնավիրուսի հետևանքով վարակվել է թվով 6171 քաղաքացի, մահացել՝ 125 քաղաքացի, իսկ անասնահամաճարակային իրավիճակը հաշվետու ժամանակահատվածում եղել է հանդարտ և վերահսկելի, ճառագայթային ֆոնը, միջինը՝ 15մկռ./ժ.:

- Համաձայն Երկրի մակարդակով կորոնավիրուսային հիվանդության(covid-19) բերովից երկրորդային դեպքով (կլաստերային դեպքեր) պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման պլան-ով նախատեսված միջոցառումների 6-րդ կետի՝ Շիրակի մարզպետին է ներկայացվել առաջարկություններ՝ մարզային օպերատիվ շտաբի անդամներին ըստ ոլորտների և մարզի թվով 42 համայնքներում ստեղծված օպերատիվ շտաբներին մարզում ռիսկերի հաղորդակցման և համայնքների ներգրավվածության մասնագիտական (վարակազերծման) թիմերի աշխատանքը համակարգելու նպատակով:

- Մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի նկատմամբ մշտական հսկողությունը իրականացնում են ՃԶՄԻՄՅ համակարգում ընդգրկված թվով 5 կազմակերպությունները և նրանց կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները յուրաքանչյուր հինգշաբթի ներկայացվում է ԱԻՆ ՓԾ ԲՊԱՅՎԿ վարչություն:
- ԱԻՆ ՓԾ ԲՊԱՅՎԿ վարչություն է ներկայացվել տեղեկություններ մարզի ՃԶՄԻՄՅ համակարգում ընդգրկված կազմակերպությունների գործունեության ոլորտների և տեխնիկական հագեցվածության վերաբերյալ:
- ԱԻՆ ՓԾ տնօրենին է ներկայացվել՝ համայնքներին բնորոշ վտանգավոր բնական երևույթների, արտակարգ իրավիճակների առաջացման օջախների, նախատեսվող պաշտպանական միջոցառումների և պայթուցավտանգ օբյեկտների վերաբերյալ տվյալներ:
- Շիրակի ՄՓՎ կողմից մարզում անտառային տարածքները սպասարկող կազմակերպություններին տրվել է մեթոդական օգնություն՝ կազմակերպությունների կողմից հրդեհների արձագանքման պլանների կազմման ուղղությամբ և ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ պետի համաձայնեցմանն է ներկայացվել՝ Զայանտառ ԴՈԱԿ-ի Գյումրիի անտառ տնտեսության Կամանաճյուղի և Արփի լիճ ազգային պարկի անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանները:
- Շիրակի ՄՓՎ կողմից կազմակերպվել և Շիրակի մարզի թվով 7 բարձրագույն ուսումնական հաստատություններում, հաստատությունների ղեկավարների հրամաններով ստեղծվել են ուսանողական կամավորական փրկարարական կազմավորումներ, կազմավորումների ստեղծման և դրանց հետ տարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ պետին :
- Համաձայն շտապ գեկույցների հաշվետախտակի ձև 65-ի, ԱԻՆ ՓԾ ԲՊԱՈՆ վարչության պետին է ներկայացվել Շիրակի մարզում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովի կազմած ակտերի վերաբերյալ տեղեկատվություն:

Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) տարածման դեպքերի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ.

- Ս.թ. մարտի 2-ից ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների հերթափոխերի ընդունման-հանձնման ժամանակ կատարվում է անձնակազմի գնում և ջերմաչափում՝ սուր շնչառական հիվանդությունների հայտնաբերման նպատակով: (ՓԾ տնօրենի 02.03.2020թ. թիվ Ն/11.4.3/7297-2020հանձ): Ս.թ. մարտի 16-ին ամենօրյա ռեժիմով ՀՓՋ-ների ջոկատների տարածքները, տրանսպորտային միջոցները և գույքը ենթարկվում է սանիտարական մշակման հատուկ աղտահանիչ նյութերով:
- Յուրաքանչյուր օր ճԿԱԿ է ներկայացվում Շիրակի մարզի բուժհաստատություններում հիվանդների, սուր-շնչառական և կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կասկածով, ինչպես նաև տնային պայմաններում կորոնավիրուսի կասկածով հսկողության տակ վերցված քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվություն:
- ՀՀ ԱԻ նախարարի հրամանի համաձայն ոստիկանության Արթիկի, Անիի, Ախուրյանի, Ամասիայի և Աշոցքի նախկին տարածաշրջաններում ոստիկանության ծառայողներից ստեղծված շրջիկ խմբերում ներգրավված Շիրակի ՄՓՎ ՀՓՋ-ներից երկուական փրկարար ծառայողները իրականացրել են համատեղ ծառայություն բնակչության տեղաշարժի սահմանափակումների վերահսկում՝ ստուգվել են տեղաշարժման թերթիկների և անձը հաստատող փաստաթղթերի առկայությունը:
- ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից տրամադրված սննդի և հիգիենայի փաթեթները թվով 90 հատ, որպես հումանիտար օգնություն Ամասիայի թիվ 50 ՀՓՋ-ի ծառայողների կողմից ս.թ. ապրիլի 12-ին բաշխվել է Ամասիայի համայնքային կենտրոնի 8 բնակավայրերում 90 միայնակ ծերերի:
- Մասնակցություն Հայաստանի Հանրապետությունում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով և համավարակի դեմ պայքարի շրջանակներում Հանրապետության ամբողջ տարածքում, ըստ սահմանված զոնաների ոստիկանության ծառայողների և առողջապահության նախարարության աշխատակիցների հետ համատեղ Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների ծառայողների կողմից իրականացվել է՝ Shirak_zone տարածքներում ծառայություն: Այցերը իրականացվել են մինչև ս.թ. սեպտեմբերի 16-ը (ԱԻ նախարարի 15.05.2020թ. թիվ 582 հրաման):

▪ ՄՓՎ հրեջ-փրկարարական ջոկատների կողմից 2020թ.-ի ընթացքում յուրաքանչյուր օր պարբերաբար իրականացվել է միջինը թվով 150 օբյեկտների ախտահանման աշխատանքներ:

▪ (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով սույն թվականի մայիսի 29-ից Շիրակի մարզի քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչության շրջանում իրականացվել են վարքագծի կանոնների քարոզչությանն ուղղված շրջայցեր՝ ներգրավվելով Գյումրու թիվ 48, Արթիկի թիվ 49 ՀՓՁ-ներից անձնակազմ և տրանսպորտային միջոցներ՝ կահավորված բարձրախոսով:

▪ Գիտակից երիտասարդներ- անվտանգ ապագա ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի Սարապատ և Աշոցք համայնքներում ստեղծվել է թվով 2 փորձագիտական և արագ արձագանքման թիմեր (30 մասնագետներից), որոնք նախատեսված են իրականացնել համայնքներում նոր կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում համապատասխան միջոցառումներ: Թիմերի հետ աշխատանքների իրականացման և համագործակցության նպատակով Շիրակի ՄՓՎ-ի կողմից ներգրավվել է Աշոցքի թիվ 52 ՀՓՁ-ի հրամանատարը:

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

• Հաշվետու ժամանակահատվածում ամենօրյա աշխատանքներ են իրականացվել փրկարարական ուժերի և տեխնիկայի մշտական մարտական պատրաստականության պահպանման ուղղությամբ:

• Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների փրկարար ծառայողների հետ անցկացվել է «Հրշեջ նոր սաղավարտների շահագործման ուղեցույց»-ի ուսուցում և ընդունվել ստուգարքներ: (ՓԾ տնօրենի մոտ կայացած խորհրդակցության 09.03.2020թ. թիվ 8-րդ արձանագրության 71-րդ հսկողական

• Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ի բազայի վրա ստեղծված ճառագայթային, քիմիական և կենսաբանական դեպքերին արձագանքման խմբի անձնակազմին ներկայացվել է կենսաբանական վարակվածության գոտում վարակագրծման իրականացման հրահանգը: (ՓԾ տնօրենի 04.03.2020թ. թիվ Ն/11.1.4/7862-2020 հանձ.)

• Համաձայն ՀՀ Կառավարության 2020թ. սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշման, հասարակական կարգի պահպանության աշխատանքներին ընդգրկվել է 5 ծառայող. թեկնածուներին տվյալները՝ համաձայն ձևաչափի ներկայացվել է ԿՎ : (ՓԾ տնօրենի 28.09.2020թ. թիվ Ն/11.5.1/43790-2020 հանձ.)

Շիրակի ԶՈՓ թիմ

• Շվեյցարիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրերի շրջանակներում՝ Շիրակի ՄՓՎ-ի և Գյումրու ՀՓՁ-ի բազայի հիման վրա ստեղծվել է Շիրակ քաղաքային որոնողափրկարարական միջին թիմը: Երկրում կորոնավիրուսի համավարագով պայմանավորված ԶՈՓ թիմի ամենամյա վարժանք չի անցկացվել:

Մարզում պատանի հրշեջ փրկարարական թիմերի ստեղծում և նախապատրաստում

Մարզի 200 և ավելի աշակերտներ ունեցող թվով 51 դպրոցներում ստեղծվել են թվով 52 պատանի հրշեջ փրկարարական թիմեր, որոնցում ընդգրկված են թվով 581 բարձր դասարանի աշակերտներ :

Մարզում համայնքային թիմերի ստեղծում և նախապատրաստում

• Հայկական Կարմիր Խաչ ընկերության, Շիրակի մարզպետարանի և Շիրակի ՄՓՎ-ի հետ համատեղ Կառուցենք դիմակայուն համայնքներ Վրաստանում և Հայաստանում ծրագրի շրջանակներում մարզի թվով 25 թիրախային համայնքներում ստեղծվել են 20 հոգուց բաղկացած համայնքային թիմեր, որոնք ապահովված են պարզագույն փրկարարական գործիքներով, գույքով և հանդերձանքով:

- Մարզի թվով 38 անտառամերձ բնակավայրերում ստեղծվել են թվով 45 կամավոր հրշեջ խմբեր, որում ընդգրկվել են թվով 305 մարդ:

Մարզում հրշեջ հենակետեր ստեղծելու ուղղությամբ

- ԱԻ նախարարի 04.12.19թ-ի թիվ 1329 հրամանով մարզի Երևան- Գյումրի-Բավրա Մ-1 ավտոճանապարհի Յողամարգ-Վարդաղբյուր հատվածում՝ Վարդաղբյուր համայնքի մոտ, ձմեռային ժամանակահատվածում առաջին օգնության հենակետ ծավալելու համար ԱԻ նախարարության կողմից տրամադրվել է վագոն – տնակ: 2020թվականի փետրվարի 1-ից մինչև մարտի 3-ը Աշոցքի թիվ 52 ՀՓԶ-ի կողմից ծավալվել է առաջին օգնության հենակետ Վարդաղբյուր գյուղում՝ օգնություն է ցուցաբերվել ձնաբքի ժամանակ ձյան մեջ արգելափակված մեքենաներին և նրանց ուղևորներին:

Հրդեհաշիջման օպերատիվ պլաններ և հրդեհաշիջման քարտեր

Շիրակի մարզում առկա թվով 420 բարձր կանչի օբյեկտներից կազմվել է 44 հրդեհաշիջման օպերատիվ պլաններ և 302 օբյեկտների հրդեհաշիջման քարտեր, իսկ մնացած թվով 6 օբյեկտների հրդեհաշիջման օպերատիվ պլանների և թվով 66 օբյեկտների հրդեհաշիջման քարտերի մշակման աշխատանքները ընթացքի մեջ են, որը նախատեսվում է ավարտել 2021թվականի մինչև մարտի 1-ը:

Հրշեջ հիդրանտների վերաբեռյալ

Մարզի տարածքում առկա են թվով 428 հրշեջ հիդրանտներ, որոնցից գործում են 87-ը՝ Մոսկովյան տիպի 180 հատ՝ գործում է 84-ը, չի գործում 96-ը, Թբիլիսյան տիպի 3 հատ՝ բոլորը գործում են, Թուրքական տիպի 245 հատ, որոնք ՀՓԶ-ների կողմից չի փորձարկվել քանի, որ << Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ՇՄՓՎ-ին չեն տրամադրվել հրշեջ սյունակներ և բալանիներ: Հարցի վերաբերյալ մեր կողմից բազմիցս զեկուցել ենք վերադասին, տեղեկացրել Շիրակի մարզպետին , քննարկումներ ենք ունեցել << Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի Շիրակի տեղամասի տնօրենի հետ, սակայն հարցը մինչև օրս լուծում չի ստացել:

Անձնակազմի հետ տարված աշխատանքների ուղղությամբ

- Փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքներն անցկացվել են փետրվար ամսին, մեկ օր՝ 4 ուսումնական ժամ տևողությամբ (թվով 5 թեմաներով):
- Վարչության անձնակազմի ինքնուրույն պատրաստության պարապմունքները իրականացվել են յուրաքանչյուր շաբաթ 4-ական ժամ տևողությամբ, իսկ ֆիզիկական պատրաստության և շարային պատրաստության պարապմունքները՝ ամիսը 2 օր, 2-ական ժամով:
 - Շիրակի ՄՓՎ ենթակա հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների անձնակազմի հետ անցկացվել է ուսուցում Բարձրահարկ շենքերում հրդեհաշիջման արդյունավետությունը բարձրացնելու, դրանց մարտավարական եղանակներին տիրապետելու և անձնակազմի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ թեմայով: (ՓԾ տնօրենի ժ/պ 03.02.2020թ. թիվ Ն/11.3.1/3152-2020 հանձ.)
 - Գյումրու թիվ 48 ՀՓԶ-ի բազայի վրա ստեղծված ճառագայթային, քիմիական և կենսաբանական դեպքերին արձագանքման խմբի անձնակազմին ներկայացվել է կենսաբանական վարակվածության գոտում վարակագրծման իրականացման հրահանգը: (ՓԾ տնօրենի 04.03.2020թ. թիվ Ն/11.1.4/7862-2020 հանձ.)
 - ՓԾ ԿՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների փրկարարական ծառայողների պաշտոնների անձնագրերի մշակման համար անհրաժեշտ տվյալները: (ՓԾ տնօրենի 20.03.2020թ. թիվ 10116-2020 հանձ. 2-րդ կետ)
 - ՓԾ ԿՎ է ներկայացվել Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների փրկարարական ծառայողների պաշտոնների անձնագրերի մշակման համար անհրաժեշտ տվյալները: (ՓԾ տնօրենի 20.03.2020թ. թիվ 10116-2020 հանձ. 2-րդ կետ)

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1. Մասնակցություն ԱԻՆ □Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա□ ՊՈԱԿ-ում անցկացված դասընթացներին՝

- □Համակողմանի ապահովում□ թեմայով - 04-06.02 – Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ի թվով 2 ծառայողներ

- □Տակելաժային աշխատանքների կառավարում□ թեմայով՝ 18-20.02 - Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ի թվով 2 ծառայողներ

- □Տեխնիկական որոնում□ թեմայով՝ 25-27.02 - Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ի թվով 2 ծառայողներ

- □Վթարափրկարարական տեխնիկական միջոցների կիրառում□ թեմայով՝ 09-13.03- Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ի թվով 2 ծառայողներ

2. Մասնակցություն ԱԻՆ □Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա□ ՊՈԱԿ-ում առցանց հեռավար տեխնոլոգիայով անցկացված տեսական դասընթացներին՝

- □Շիրնարարական կառուցվածքների կայունացման համակարգեր՝ ամրակապում□ թեմայով՝ 03-04.06 – Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ի թվով 3 ծառայողներ

- □Բարձրությունների վրա փրկարարական աշխատանքների կազմակերպում՝ պարանային աշխատանք□ թեմայով՝ 24-25.06 – Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ի թվով 3 ծառայողներ

3. Շիրակի ՄՓՎ ՀՓՁ-ներում □BC□ կարգի վարորդական իրավունքի վկայական ունեցող անձնակազմի հետ անցկացվել է հրշեջ-փրկարարական, հիմնական և օժանդակ տեխնիկայի շահագործման գիտելիքների պրակտիկ և տեսական ուսուցում: (ՓԾ տնօրենի 19.06.2020թ. թիվ 17/692- Ա հրաման)

4.Մասնակցություն ԱԻՆ □Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա□ ՊՈԱԿ-ում անցկացված ՀՓՁ-ների խմբի պետերի վերապատրաստման դասընթացներին՝

14.09-25.09 - Գյումրու թիվ 48 ՀՓՁ-ի թվով 2 խմբի պետեր (ՓԾ տնօրենի 26.08.2020թ. Ն/11.3.1/38036 հանձնարարական)

Անձնակազմի կառավարում

❖ ՇՄՓՎ ընդհանուր համալրվածությունը կազմում է 99% - ըստ ստորաբաժանումների՝
ՇՄՓՎ - 100%

Գյումրիի ՀՓՁ - 98 %

Արթիկի ՀՓՁ - 96%

Անիի ՀՓՁ - 100%

Ախուրյանի ՀՓՁ – 100%

Ամասիայի ՀՓՁ – 100%

Աշոցքի ՀՓՁ – 100%

2020թ. ընթացքում՝

- Հիմնական հրամաններ – 2 ծառայող, 2019թ.- 34 ծառայող նվազել 32-ով կամ 94%- ու
- Նախնական հրամաններ – 1 ծառայող 2019թ.-19 ծառայող նվազել է 18-ով կամ %- 95ով
- Վերականգման հրամաններ – 2 ծառայող - 2019թ. – չկա
- ազատվել է ծառայությունից – 2 ծառայող - 2019թ. 15 ծառայող նվազել է 13-ով կամ 80%- ու
- պաշտոնի տեղափոխություն - 6 ծառայողների - 2019թ. 14 ծառայող նվազել է 8-ով 56%-ով
- արձակուրդից են օգտվել – 257 ծառայողներ - 2019թ. – 257 ծառայող
- ՃԿՊԱ-ում են վերապատրաստվել – 33 ծառայող - 2019թ. – 43 ծառայող նվազել է 10-ով կամ 25,5 %- ու
- պայմանագրի երկարացում- 20 ծառայողի – 2019թ. 21 ծառայող նվազել է 1-ով կամ 5%- ու
 - *Շնորհվել է թվով 37 փ/ծ կոչումներ- 2019թ. շնորհվել է թվով 66 կոչումներ նվազել է 29-ով կամ 44%- ու*
 - *գնդապետ – 1 ծառայող - 2019թ. – 1 ծառայող*
 - *փոխգնդապետ- 1 ծառայող 2019թ. – 1 ծառայող*
 - *մայոր- 1 ծառայող 2019թ. - չկա*
 - *կապիտան – 4 ծառայող 2019թ. - չկա*
 - *ավագ լեյտենանտ – 2 ծառայող – 2019թ. -2 ծառայող*
 - *ավագ ենթասպա- 1 ծառայող – 2019թ. -չկա*
 - *ավագ սերժանտ – 6 ծառայող – 2019թ. 12 ծառայող*
 - *սերժանտ - 13 ծառայող 2019թ. 22 -ծառայող*

- կրտսեր սերժանտ - 5 ծառայող 2019թ. - 12 ծառայող
- շարքային – 2 ծառայող- 2019թ.-9 ծառայող
- ավագ – 1 ծառայող - 2019թ. - 3 ծառայող

Խրախուսանքներ 2020թ. – 136 (2019թ. – 205) նվազել է 69-ով կամ 32,5%- ու

- Շիրակի ՄՓՎ – 22 ծառայող (2019թ. – 219)
- Գյումրու ՌՓՁ- 33 ծառայող (2019թ. – 44)
- Արթիկի ՌՓՁ – 16 ծառայող (2019թ. – 32)
- Ամասիայի ՌՓՁ – 16 ծառայող (2019թ. – 25)
- Անիի ՌՓՁ - 15 ծառայող (2019թ. – 14)
- Աշոցքի ՌՓՁ - 9 ծառայող (2019թ. – 18)
- Ախուրյանի ՌՓՁ – 25 ծառայող (2019թ. – 53)

2020թ. ընթացքում Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների ծառայողները կարգապահական տույժերի չեն ենթարկվել:

2019թ. ընթացքում 15 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժի

- Շիրակի ՄՓՎ – 2 ծառայող
- Գյումրու ՌՓՁ – 11 ծառայող
- Արթիկի ՌՓՁ- 2 ծառայող

2020թ. ընթացքում անցկացվել է թվով 5 խորհրդակցություններ (2020թ. կատարած աշխատանքների ամփոփման մասին – 1; գործակարգավարական –4)

- պետի կողմից արձակվել է թվով 26 ներքին հրամաններ,
- մուտքի փաստաթղթերի քանակը կազմել է 2601- գրություններ,
- ելքի փաստաթղթերի քանակը կազմել է 1622- գրություններ:

- ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրեն, փ/ծ գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանը 2020 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ ԱԻՆ ՓԾ Շիրակի ՄՓՎ 25 աշխատակիցների մեղալիներ և պատվոգրեր հանձնեց Արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա՝ սեպտեմբերի 4-ի կապակցությամբ, ինչպես նաև մասնագիտական բարձր պատրաստականության և ծառայողական պարտականությունները բարեխիղճ կատարելու համար:

Վեց փրկարարական ծառայող պարգևատրվել է «ԱՆՎԵՅԵՐ ՓՐԿԱՐԱՐ», վեց՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀՐՇԵԶ-ՓՐԿԱՐԱՐ», մեկ՝ «ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿՈՒԹՅՈՒՆ» և մեկ՝ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ» մեղալիներով: Յոթ փրկարարական ծառայող արժանացել է ԱԻՆ նախարարի և ևս չորսը՝ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի պատվոգրերի:

Մեկ փրկարարական ծառայող արժանացել է ՀՀ գլխավոր դատախազի, մեկը՝ ՀՀ ԱԱԾ տնօրենի, մեկը՝ ՀՀ Ոստիկանապետի կողմից պատվոգրերի:

ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Հովհաննես Եմիշյանը 2020թ. դեկտեմբերի 3-ին Շիրակի ՄՓՎ-ում 12 փրկարար ծառայողների հանձնեց մեղալիներ մարտական գործողություններին մասնակցելու և քաջություն ցուցաբերելու համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

Շիրակի ՄՓՎ-ի կողմից կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է թվով 11 որոշում:

Թիկունքի և կյուրատենիսիկական ապահովման վերաբերյալ.

ՀՀ-ում ստեղծված համաճարակային իրավիճակից COVID-19-ով պայմանավորված ԱԻՆ ՓԾ ԹՆԱՎ կողմից պարբերաբար ստացվել և բաշխվել է Շիրակի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումներին անհատական պաշտպանիչ միջոցներ հավաքածու(լրակազմ) և ախտահանիչ կյուրեր՝ և բժշկական սպիրտ 96%(լիտր):

- ԱԻՆ նախարարի 11.02.2020թ-ի 17/160 հրամանով Շիրակի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումներին հատկացվել է թվով 7 հատ նոր ԻՍՈՒՉՈՒ 4*4 մակնիշի հրշեջ մեքենաներ, որը ստացվել է «Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագրով»:

▪ ս/թ-ի փետրվար ամսին ԱԻՆ ԹՆԱԿ կողմից թվով 4 ՅՓՁ-երի տրամադրվել է Ամերիկյան(ԱՄՆ) կումուսալ կենցաղային գույք և հրդեհաշիջման գործիքներ և պարագաններ:

▪ ԱԻՆ ՓԾ տնօրենի 10.03.2020թ-ի N 17/283 հրամանով Աշոցքի ՅՓՁ-ին հատկացվել է ՈՒԱԶ 31514 մակնիշի ավտոմեքենա հետագա շահագործման նպատակով:

▪ ԱԻՆ ԾԿԿ կողմից ս/թ-ի մայիս ամսին թվով 6 ՅՓՁ-երի և Շիրակի ՄՓԿ-ին հատկացվել է նկարահանող Սաղավարտ Android 5.1 տեսակի:

▪ ԱԻՆ ՓԾ-ի կողմից ս/թ-ի մայիս ամսին Շիրակի ՄՓԿ-ին մարզային ՃԿԿ-ին և թվով 6 ՅՓՁ-երի հատկացվել է ընդահնուր թվով նոր 19 լրակազմ համակարգիչներ:

▪ ԱԻ նախարարի 02.06.2020թ-ի N 640 հրամանով Գյումրու ՅՓՁ հատուկ հրշեջ ավտոամբարձիչը ԻՍՈՒՉՈՒ ԱԱ-26 ժամանակավոր օգտագործման է հանձնվել ԵՓԿ թիվ 9 ՅՓՁ-ին և ընդունվել է ՉԻԼ 131 ԱՍ ավտոսանդուխքը Գյումրու ՅՓՁ հաշվեկշիռ: Նույն հրամանով Աշոցքի ԻՍՈՒՉՈՒ 4*4 մակնիշի հրշեջ ավտոմեքենան հանձնվել է ԹՆԱԿ բազա և ընդունվել ՉԻԼ 131 մակնիշի հրշեջ ավտոմեքենան Աշոցքի ՅՓՁ հաշվեկշիռ:

▪ Ս.թ. սեպտեմբերի 17-ին ԱԻՆ ՓԾ-ից Ամասիայի թիվ 50 ՅՓՁ-ի հաշվեկշիռը համալրվել է Գազ 6611 ԿՈՒՆԳ մակնիշի օժանդակ ավտոմեքենայով:

Իրականացված շինարարական և այլ բնույթի աշխատանքներ

- Ախուրյանի թիվ 53 ՅՓՁ-ի շենքի հիմնանորոգման պատճառով ս.թ. 14.09.2020-ից ջոկատը ծառայությունն իրականացնում է ժամանակավոր տեղակայման վայրում գ.Ախուրյան Գյումրու խճուղի 78 հասցեում:
- ՇՄՓԿ կողմից աշխատանքներ են տարվել Գյումրու, Ախուրյանի և Աշոցքի ՅՓՁ-ների նոր կառուցվող շենքերի փաստաթղթերի ձեռք բերման ուղղությամբ: Գյումրու և Ախուրյանի ՅՓՁ-ների նոր շենքերի կառուցման աշխատանքները մեկնարկել է 2020 թվականի սեպտեմբեր ամսից և նախատեսվում է այն ավարտել 2021թվականի առաջին կիսամյակի վերջում, իսկ Աշոցքի ՅՓՁ-ի նոր շենքի կառուցման աշխատանքները կմեկնարկի 2021թվականի երրորդ եռամսյակի սկզբին:
- Ամասիայի ՅՓՁ-ի շենքը գտնվում է անմխիթար վիճակում, չկան համապատասխան կենցաղային պայմաններ ծառայությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար, իսկ ավտոտնակները գտնվում են վթարային վիճակում: ՅՓՁ-ի շենքային պայմանների վիճակի վերաբերյալ մեր կողմից բազմիցս զեկուցվել է ղեկավարությանը և առաջարկվել կապիտալ վերանորոգել ՅՓՁ-ի շենքը և ավտոտնակները: ՅՓՁ-ի նոր շենքի կառուցման տարածքի ձեռք բերման ուղղությամբ մեր կողմից աշխատանքներ են տարվում Ամասիայի համայնքի ղեկավարության հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզում արտակարգ իրավիճակների կանխման, իսկ առաջացման դեպքում օպերատիվ արձագանքման, հետևանքների մեղմացման և վերացման աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով առաջարկվում է.

- ՄՓԿ-ի ՃԿԿ-ի գործառույթները լիարժեք իրականացնելու համար համապատասխան հաստիքների հատկացում:
- Ամասիայի թիվ 50 ՅՓՁ-ի շենք-շինությունների վերանորոգման համար միջոցների հատկացում:
- Արթիկի թիվ 49, Ամասիայի թիվ 50, Անիի թիվ 51, Աշոցքի թիվ 50 և Ախուրյանի թիվ 53 ՅՓՁ-ներին լեռնափրկարարական գույքի տրամադրում:
- Գյումրու թիվ 48 ՅՓՁ-ին ջրափրկարարական գույքի հատկացում:
- ՅՓՁ-ներին հեռադիտակների հատկացում:
- ՇՄՓԿ-ին և ՅՓՁ-ներին գրասենյակային կահույքի հատկացում:
- ՇՄՓԿ և ենթակա ստորաբաժանումների կապի և տեխնիկական միջոցների սպասարկման համար հաստիքի տրամադրում:
- Արթիկի թիվ 49, Ամասիայի թիվ 50, Անիի թիվ 51, Աշոցքի թիվ 52 ՅՓՁ-ներին ձյունազնացների և դահուկների հատկացում:
- Արթիկի թիվ 49 ՅՓՁ-ի ամենազնաց ավտոմեքենայի տրամադրում:

- Շիրակի ՄՓՎ-ին հատկացնել նոր ծառայողական ավտոմեքենա:
- Շիրակի ՄՓՎ-ի սպասարկման տարածքում օդային հետախուզությունն իրականացնելու համար 1 հատ թռչող սարքի (դռոն) հատկացում:

Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ,
փ/ծ գնդապետ՝ Ա. Գյոզալյան